Հայտարարություն

Մրցույթ՝ ՀՀ «Լոռու մարզի Դաշտադեմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (23 դասաժամ), ֆիզիկայի (5 դասաժամ), ֆիզկուլտուրայի (5 դասաժամ), ինֆորմատիկայի (2 դասաժամ), երգ-երաժշտության (1.5 դասաժամ), կերպարվեստի (1.5 դասաժամ), աշխարհագրության (4 դասաժամ), բնագիտության (2դասաժամ), քիմիայի (4 դասաժամ), անգլերենի (7 դասաժամ), հայրենագիտության (2 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-դիմում (Ձեւ 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման *ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:*
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից *մինչեւ* **օգոստոսի 12 -ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը,** բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա ***օգոստոսի*** 17 **-ին՝ ժամը 12:00-ին,** ՀՀ Լոռու մարզի Դաշտադեմի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Լոռու մարզ, գ. Դաշտադեմ 7-րդ փողոց, 10-րդ շենք
Տեղեկությունների համար զանգահարել (098)08-58-98 հեռախոսահամարով: